Արեստակես Ս. Սիմավորյան[1]

Էրդողանի «գյուլենական համախտանիշը» և ASSAN Group-ի գործը

Փորձագետի տեսակետ 13.08.2025 թ.

Սեղմագիր

ԱՌՎԱԿ-ի փորձագետ Ա. Սիմավորյանի մեկնաբանությունը վերաբերում է թուրքական ASSAN Group ռազմաարդյունաբերական ընկերության ղեկավարության ձերբակալությունը՝ «ռազմական լրտեսության» և Ֆեթուլլահ Գյուլենի ցանցի (FETÖ) հետ կապերի մեղադրանքով: Հեղինակի կարծիքով, սա ընդամենը պատրվակ է, իսկ իրական նպատակը իշխանության համար անցանկալի և հաջողակ մրցակցին շուկայից դուրս մղելն է: Նրա կարծիքով, այս գործը բացահայտում է Էրդողանի վարչակազմի գործելաոճը, որտեղ «Գյուլենական լինելու» մեղադրանքը քաղաքական և տնտեսական ճնշման գործիք է դարձել, երկրի ռազմարդյունաբերությունը խիստ քաղաքականացված է, իսկ պետությունը վերահսկում է շուկան: Հեղինակը կանխատեսում է, որ Թուրքիայում սպասվող նախագահական ընտրություններին ընդառաջ Էրդողանը կշարունակի օգտագործել «գյուլենական սպառնալիքը»՝ մրցակիցներին վարկաբեկելու և ճնշելու համար:

Բանալի բառեր. *Թուրքիա, Էրդողան, ASSAN Group, FETÖ (Գյուլենական շարժում), ռազմարդյունաբերություն, քաղաքական հավատարմություն, պետական վերահսկողություն, ընկերությունների բռնագրավում, TMSF:*

Վերջին տասնամյակի ընթացքում Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրը դարձել է Անկարայի հիմնական հենասյուներից մեկը, ինչը առիթ է տալիս Ռ. Թ. Էրդողանին պարծենալ, իսկ երբեմն՝ նաև դրանով սպառնալ: Սակայն, ռազմաարդյունաբերական ոլորտում գրանցված հաջողությունները հաճախ ուղեկցվում են ներքին ճգնաժամերով, խիստ մրցակցությամբ և սկանդալներով: Վերջին ամիսների ամենաաղմկոտ իրադարձություններից մեկը *ASSAN Group* պաշտպանական (ռազմական) կոնգլոմերատի ղեկավարության ձերբակալությունն էր:

Այսպես, 27.08.2025 Ստամբուլի գլխավոր դատախազության հայտարարության համաձայն՝ *«ռազմական լրտեսություն»* անվանումով իրականացված հետաքննությունների ընթացքում կալանավորվել են վերոգրյալ ընկերության սեփականատեր Էմին Օները, գործադիր տնօրեն Գյուրջան Օքումուշը և այլ անձինք: Հետաքննությունը պնդում է, որ վերջիններս ռազմավարական առումով արժեքավոր տեղեկատվություն են փոխանցել արտերկիր և փոխգործակցության մեջ են եղել այլևս հանգուցյալ Ֆ. Գյուլենի ձևավորած

[1] Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014-2021 թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019–2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

ցանցի հետ: Ինչպես հայտնի է, Անկարան շարունակում է վերջինիս համարել 2016 թ. հուլիսի ձախողված ռազմական հեղաշրջման կազմակերպիչ: Միաժամանակ, որոշում է ընդունվել *ASSAN Group*-ի կազմում ընդգրկված 10 ընկերությունների կառավարումը ժամանակավորապես փոխանցել Թուրքիայի խնայողական ավանդների ապահովագրության հիմնադրամի (TMSF) արտաքին կառավարմանը:

Այս որոշումը հիմնավորված է ԹՀ-ում գործող օրենսդրական դրույթներով, որոնք նախատեսում են ընկերությունների ակտիվները պետական վերահսկողության տակ փոխանցելու հնարավորություն այն դեպքերում, երբ հայտնաբերվում են դրանց՝ օրենքին հակասող նպատակներով օգտագործման ռիսկեր: Ավելի հստակ՝ 2016 թ. հեղաշրջման փորձից հետո հայտարարված արտակարգ դրության շրջանակներում նույն տարվա սեպտեմբերի 1-ին հրապարակված թիվ 674 Կանոնադրական որոշմամբ (ընդունվել է 10.11.2016 թ.-ի թիվ 6758 օրենքով)՝ եթե որևէ ընկերության հոգաբարձուների պարտականություններն ու լիազորությունները կատարող անձինք առնչություններ են ունեցել *«Գյուլենական շարժման» (FETÖ)* կամ *«Զուգահեռ պետության» (PDY)* հետ, ապա նրանց կողմից ղեկավարվող ընկերությունները կարող են փոխանցվել *TMSF*-ին, որը նույն կանոնադրությամբ լիազորված է կարգավորելու ընկերության ակտիվների վաճառքն ու լուծարման ընթացակարգը[2]:

2016 թվականից ի վեր այս օրենքի շրջանակներում պետության կողմից փակվել, բռնագրավվել կամ պետական վերահսկողությանն են փոխանցվել 1000-ավոր ընկերություններ, գիտակրթական և բիզնես ոլորտի հաստատություններ, բանկեր, ՀԿ-ներ, «ուղեղային կենտրոններ» և ԶԼՄ-ներ: Կարճ ասած՝ մասնավոր սեփականության մի զգալի հատվածն անցավ *TMSF*-ի և պետական կառույցների վերահսկողության տակ: Բազմաթիվ ընկերություններ վաճառվեցին կամ փոխանցվեցին այնպիսի բիզնես խմբերի, որոնք քաղաքականապես մոտ էին իշխանությանը: Մյուս կողմից՝ տնտեսության մեջ պետական ազդեցությունն ուժեղացավ, ինչի հետևանքով որոշ ոլորտներում առաջացավ կիսամենաշնորհային իրավիճակ: Այնպես, որ սա հարմար օրենք է, որը թույլ է տալիս Ռ. Թ. Էրդողանին ձերբազատվել տնտեսապես կամ քաղաքականապես անցանկալի «տարրերից»: Ի դեպ, շատ դեպքերում *«FETÖ-ի հետ կապեր ունենալ»* ձևակերպումն անորոշ է և զուրկ որևէ ապացույցներից, սակայն դա չի խանգարել իշխանություններին լայնորեն օգտագործել օրենքից բխող մեխանիզմը, որը գործնականում վերածվել է բռնագրավման և քաղաքական ճնշման գործիքի:

Ինչ վերաբերում է 1986 թ. հիմնադրված *ASSAN Group*-ին, ապա այն դարձավ պաշտպանական արդյունաբերության խաղացող 2016 թվականին՝ պաշտպանական

[2] Tarihsel Yolculuk, *Թուրքիայի խնայողական ավանդների ապահովագրության հիմնադրամի պաշտոնական կայքհասցե*, https://www.tmsf.org.tr/tr/Tmsf/Info/tarihce.tr (բեռնման օրը՝ 08.09.2025).

նշանակության արտադրանքի մշակումներ սկսելուց հետո: Հիմնականում արտադրում է հրետանային զինամթերք, *FAB/OFAB* շարքի ավիացիոն ռումբեր, ականանետներ, հրթիռային և էներգետիկ համակարգեր Անկարայի և Բոլուի բարձր տեխնոլոգիական արտադրական օբյեկտներում: Վերջին տարիներին սկսել էր արտադրել ԱԹՍ-ների բաղադրիչներ: Զինամթերքի արտադրությանը զուգահեռ, ընկերությունը նպատակադրվել է դառնալ համաշխարհային մակարդակով պաշտպանական արդյունաբերության ոլորտում խաղացողներից մեկը՝ նորարարական ինժեներական լուծումների և արտադրական գծերի կարողությունների միջոցով: Ընկերությունն առաջիկայում նախատեսում է Նախիջևանում հիմնել զինամթերքի արտադրության գիծ և ձգտում է ընդլայնել իր ներկայությունը Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի և Ասիայի շուկաներում[3]: Այս տարեսկզբին հայտնի դարձավ, որ *Assan Group*-ը ձեռք է բերել հարավաֆրիկյան *Dynaflow Technology-ի* ընկերությունը՝ *(բարձր տեխնոլոգիական պաշտպանական արդյունաբերության կազմակերպություն է, որը մասնագիտանում է ինքնաթիռների զինամթերքի համակարգերի մեջ)* ընդհանուր նշանակության ռումբերի համար նախատեսված տարատեսակ պայթուցիչների տեխնոլոգիաներ մշակելու և շուկայում մրցունակությունը բարելավելու համար[4]:

Հատկանշականն այն է, որ մինչ ընկերության հետ կապված վերոհիշյալ միջադեպը, ռազմաարդյունաբերական որևէ համալիր դեռ չէր հայտնվել անվտանգության ուժերի տեսադաշտում՝ «գյուլենականների» հետ կապեր ունենալու համատեքստում: Ամեն դեպքում, ինչպես նախկինում էինք կանխատեսել՝ թուրքական կառավարությունը շարունակելու է ճնշումներ բանեցնել «Շարժման» կամ ենթադրյալ գյուլենականների նկատմամբ, քանի որ բռնաճնշումներն ու ապօրինի պետական ռեկետը Ռ. Թ. Էրդողանի վարչակազմը որակել է որպես *«ազգային անվտանգության համար անհրաժեշտ գործողություններ»*[5]:

Էրդողանի վարած նման քաղաքականությունը լուրջ խոչընդոտ է դարձել ոլորտի զարգացման համար, որն առանց այն էլ ծայրահեղ քաղաքականացված է, որտեղ առկա է կլանային կապիտալիզմ և «ուղեղների արտահոսք»: Նկատենք, որ իշխող քաղաքական վերնախավի նկատմամբ հավատարմությունը նույնքան կարևոր գործոն է, որքան՝

[3] ASSAN Group Strengthens its Position in The Defense Industry: Next-Generation Ammunition and Systems to be Showcased at IDEX 2025. *Defence Turkey*. https://www.defenceturkey.com/en/content/assan-group-strengthens-its-position-in-the-defense-industry-next-generation-ammunition-and-systems-to-be-showcased-at-idex-2025-6201 (բեռնման օրը՝ 08.09.2025).

[4] Türk savunma şirketi Afrikalı bomba üreticisini satın aldı! Yunanistan tedirgin. *Haberler.com. 29.05.2025,* https://www.haberler.com/guncel/assan-group-guney-afrikali-dynaflow-teknoloji-yi-satin-aldi-18684147-haberi/ (բեռնման օրը՝ 08.09.2025).

[5] Симаворян, А. (2024). «Послегюленовская» Турция: возможные развития. *Армянский аналитический центр АРВАК,* https://surl.li/kitkdo (բեռնման օրը՝ 08.09.2025).

ընկերությունների տեխնոլոգիական մակարդակը: Իրականում քաղաքական հավատարմությունը տալիս է մրցակցային զգալի առավելություն, որով պայմանավորված պետությունը աջակցում է հիմնականում խոշոր պետական ընկերություններին, մինչդեռ մասնավոր ընկերություններին պայմանագրերը տրամադրվում են ընտրողաբար: Այս առումով ԱԹՍ-ների արտադրությամբ հայտնի *Baykar* մասնավոր ընկերությունը դրա վառ օրինակներից է, որը եզակի առաջխաղացման է հասել քաղաքական իշխանության հետ սերտ, անգամ՝ բարեկամական կապերի շնորհիվ: Սա ստեղծում է երկակի ստանդարտներ և սահմանափակում է արդար մրցակցությունը երկրում:

Նման միտումները, հատկապես երևան եկան 2016 թ. հեղաշրջման փորձից հետո, երբ պետական պայմանագրերի և ռեսուրսների հասանելիությունը տնտեսավարողներին սկսեց կապվել իշխանությունների նկատմամբ հավատարմության կամ *FETÖ*-ի հետ կասկածելի կապերի և առնչությունների բացակայության հետ: Կարծում ենք՝ *Assan Group*-ի դեպքը պայմանավորված են հենց առաջին գործոնով, իսկ գյուլենական ցանցի հետ կապերը զուտ պատրվակ է անցանկալի մրցակիցներին հեռացնելու համար: Ստեղծված իրավիճակը հստակ ազդակ է մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, որոնք տեղական և միջազգային շուկաներ մուտք գործելու հնարավորությունը չկորցնելու համար այսուհետ հարկադրված են հավատարմության նշաններ ցույց տալ իշխանություններին: Դա նաև այն պատճառով, որ ինչպես պետական, այնպես էլ որոշ մասնավոր ընկերություններ հաճախ առաջնորդվում են կառավարության արտաքին օրակարգով, քանի որ այդ շրջանակներում հենց կառավարությունն է այլ երկրների հետ նախնական համաձայնության գալիս թուրքական արտադրության սպառազինությունների արտահանման մասով: Որոշ շուկաներում (Աֆրիկա, Մերձավոր Արևելք և Կենտրոնական Ասիա) կառավարությունն ուղղակիորեն որոշում է, թե *«որ ընկերությունները՝ որ երկրներին սպառազինություն կվաճառեն»*:

Ինչևէ, միջադեպով պայմանավորված կառավարությունն ու պետանվտանգության մարմինները այսուհետ կխստացնեն նաև մասնավոր ընկերությունների հանդեպ պետական վերահսկողությունը, այդ թվում՝ պաշտպանական նախագծերի ոլորտում: Թե ինչպե՞ս է կառավարությունը կարողանալու պահպանել պետական (ֆինանսական վատնումներով ու կոռուպցիոն դրսևորումներով հայտնի) և մասնավոր ընկերությունների միջև հավասարակշռությունը, ասենք, օրինակ՝ ֆինանսական ռեսուրսների բաշխման և շահերի բախման դեպքերում, դժվար է ասել: Սակայն ակնհայտ է, որ ոլորտի վրա վերահսկման և ընկերությունների քաղաքականացման միտումները չեն նվազելու: Այս իրավիճակը կարող է հանգեցնել նրան, որ տեղական և արտասահմանյան ներդրողների ու արտաքին առևտրային գործընկերների մոտ կարող է անվստահություն առաջանալ թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունների նկատմամբ, բերելով ընդհուպ գործընկերային կապերի խզմանը:

Ուրվագծելով թեմայի շուրջ մեր որոշ դիտարկումները, նշենք, որ Թուրքիայում սպասվող նախագահական ընտրություններին ընդառաջ հնարավոր են նոր «*սկանդալային բացահայտումներ*»՝ միտված Էրդողանի շուրջ քաղաքական և հանրային համախմբում: Ուստի *«FETÖ-ի հետ կապերի»* մեջ մեղադրանքները պարբերաբար օգտագործվելու են ընդդիմադիր քաղաքական գործիչների, լրագրողների, զինվորականների և իշխանությունների հանդեպ չեզոք դիրքորոշում բռնած գործարարների դեմ, ինչը Ռ. Թ. Էրդողանի քաղաքական կլանին թույլ է տալիս այդ եղանակով վարկաբեկել և սպառնալ իր մրցակիցներին և անցանկալի անձանց՝ առանց նրանց հետ գաղափարախոսական հողի վրա բաց բանավեճի մեջ մտնելու անհրաժեշտության: Սակայն, որքան Թուրքիան հեռանում է 2016 թ. հուլիսյան իրադարձություններից, այդքան ավելի քիչ համոզիչ է դառնում «*գյուլենական սպառնալիքի*» մասին պարբերաբար կրկնվող հռետորաբանությունը: Սա վկայում է այն մասին, որ ավտորիտար համակարգի շուրջ համախմբման ուղղությամբ կա նոր գաղափարների պակաս, և այդ պատճառով Ռ. Թ. Էրդողանը դեռևս չի փորձում հրաժարվել Գյուլենի՝ որպես խորհրդանշական թշնամու կերպարի օգտագործումից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Tarihsel Yolculuk, *Թուրքիայի խնայողական ավանդների ապահովագրության հիմնադրամի պաշտոնական կայքհասցե*, https://www.tmsf.org.tr/tr/Tmsf/Info/tarihce.tr

2. ASSAN Group Strengthens its Position in The Defense Industry: Next-Generation Ammunition and Systems to be Showcased at IDEX 2025. *Defence Turkey*, https://www.defenceturkey.com/en/content/assan-group-strengthens-its-position-in-the-defense-industry-next-generation-ammunition-and-systems-to-be-showcased-at-idex-2025-6201

3. Türk savunma şirketi Afrikalı bomba üreticisini satın aldı! Yunanistan tedirgin. *Haberler.com*, 29.05.2025, https://www.haberler.com/guncel/assan-group-guney-afrikali-dynaflow-teknoloji-yi-satin-aldi-18684147-haberi/

4. Симаворян, А., (2024). «Послегюленовская» Турция: возможные развития. *Армянский аналитический центр АРВАК*. https://surl.li/kitkdo